ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- -------- 2023 թվականի № -Ա

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի մայիսի 8-ի №01/25.1/1535-2023 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Երևանյան փողոցի №118/1 հասցեում գտնվող 0.68 հա մակերեսով հողատարածքի, 911.9 քմ մակերեսով օժանդակ շինության և 8.7 քմ մակերեսով պահակատան (այսուհետ՝ Գույք)՝ աճուրդային եղանակով օտարման գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) Հանձնաժողովի կողմից Գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, Ընկերության ներկայացրած փաստաթղթերը և տեղեկատվությունը համապատասխանում են Հանձնաժողովի սահմանած կարգի պահանջներին, իսկ անհրաժեշտ փորձ ունենալու վերաբերյալ դրույթը Գործարքի նկատմամբ կիրառելի չէ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Երևանյան փողոցի №118/1 հասցեում

գտնվող 0.68 հա մակերեսով հողատարածքի, 911.9 քմ մակերեսով օժանդակ շինության և 8.7 քմ մակերեսով պահակատան՝ աճուրդային եղանակով օտարման գործարքի կնքմանը:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը,
2) Գործարքի առարկա հանդիսացող Գույքի օտարումից առաջացած գումարը նվազեցվելու է սակագների վերանայման ժամանակ Ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագների հաշվարկից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
_____2023թ.